

VIII

Наивысший показатель в этой области воздействия обеспечили варианты: нитрат аммония - 200 кг/га и сульфат цинка - 1.0 кг/га. В вышеуказанных вариантах урожайность чабера составила 527.0-854.0 и 502.0-814.0 кг/га, или по сравнению с контролем больше на 157-228.0 и 132.0-188.0, соответственно.

IMPACT OF MACRO -AND MICRO FERTILIZERS ON THE COMPONENTS GROWTH AND CROP CAPACITY OF SAVORY SEEDS IN CONDITIONS OF ISLAMIC REPUBLIC OF IRAN

R. Hassan Zade

Hajiabat Agricultural University, Islamic Republic of Iran

Key words: savory, growth, biological yield, seed yield, quality

Summary

The results of three-year study show that macro- and micro fertilizers have a positive impact on the growth components and savory yield. The higher index in this field belongs to the variants: ammonium nitrate-200 kg/ha and zinc sulfate-1.0 kg/ha. In the abovementioned variants the yield of savory makes up 527.0-854.0 and 502.0-814.0 kg/ha or in comparison with the control it makes more by 157-228.0 and 132.0-188.0 kg, respectively.

Գրականության ցանկ

1. Ա. Մելիքյան: Բանջարաբուծություն: Երևան, 2005 թ. էջ 502:
2. Charles O., Joly, R., and Simo, J. E., 1994. Effect of water supply and light intensity on growth and essential oli of two Thymus vulgaris Selections. Angewandte Botanik, 68: 83-88.
3. Letchamo, W., Marquard, R., Holzl, J. and Gosselin A., 1994. Effects of water supply and light intensity on growth and essential oil of two Thywus vulgaris selections. Angewandte Botanik, 68: 83-88.
4. Misra, A., and Srivastava, N.K., 2000. Influence of water stress on Japanese mint. Journal of Herbs, Spices and Medicinal Plants, 7: 51-58.

Ընդունված է տպագրության  
12.06.2012 թ.

ՀՏԴ 636.22

ԱՎԱՏՐԻԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՇՎԻՅ ՅԵՂԻ ԵՐԻՆՁՆԵՐԻ ԱՃԸ, ՉԱՐԳԱՅՈՒՄԸ ԵՎ ԿԱԹՆԱՅԻՆ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ս.Ա. Շահնազարյան

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղ

Գ.Ի. Կասպարյան, Ն.Ա. Մուսայելյան

ԼՂՀ «Տոհմային կայան» ՓԲԸ

Բանալի բառեր - շվից ցեղ, լակտացիա, գենետիկական ներուժ, երինք. մթերատվություն

Ն եր ա ծ ու թ յ ու ն

Խորհրդային Միության փլուզումից և հողի սեփականաշնորհու-

մից հետո, Արցախի գյուղատնտեսությունը, առավել ևս՝ անասնաբուծությունը, անկում ապրեց: Անա-

սունների գլխաքանակը կտրուկ նվազեց՝ տեղիք տալով նաև մթերատվության անկման: 2011թ. տվ-

յալներով, ֆուրաժային կովի կաթնատվությունը կազմել է ընդամենը 1691կգ: Անշուշտ, մթերատվության նշված մակարդակը չի կարող բավարարել ժողովրդական տնտեսության հարաճուն պահանջները, ուստի պետք է նոր ուղիներ փնտրել՝ ուղղված ամասնաբուծության մթերատվության բարձրացմանը, որոնցից առավել կարևոր նշանակություն ունի ցեղի ճիշտ ընտրությունը:

Սովորաբար, սորտի ընտրության տեսանկյունից, բուսաբուծության բաց թողած սխալի շտկումը, ժամկետային առումով, շատ ավելի հեշտ է կատարվում՝ պահանջելով ոչ ավելի, քան մեկ տարի, մինչդեռ նախրի ժառանգական ստրուկտուրայում անհաջող արտադրողի գենոտիպը կարելի է վերափոխել 8-10 տարվա ընթացքում:

Ներկա ժամանակաշրջանում նախրի գենետիկական ներուժը, հատկապես՝ արհեստական սերմնավորման պայմաններում, պայմանավորված է հիմնականում արտադրողներով, քանի որ նրանց ժառանգականությամբ, 3-4 տարուց հետո, ձևավորվում է տնտեսության «մթերատու» բազան:

Կարևորագույն նախադրյալները՝ կապված ցեղի գնահատման հետ, համարվում են կաթնատվությունը, մաստու հատկանիշները,

վերարտադրական ընդունակությունը, իսկ արդյունաբերական տեխնոլոգիայի պայմաններում՝ նաև պիտանիությունը մեքենայական կիթին:

Աշխարհի մասշտաբով լայն տարածում ստացած ցեղերից առավել ուշադրության է արժանի շվից ցեղը: Այս ցեղի ամասունները հիմնականում աչքի են ընկնում ամուր մարմնակազմությամբ, լավ մսային և կաթնային մթերատվությամբ, բարձր հարմարվողական հատկանիշներով: Հաշվի առնելով բազմազան բնակլիմայական պայմանների առկայությունը՝ ստեղծվել են այս ցեղի մի շարք զոնալ և ներցեղային տիպեր: Առանձնապես ուշադրության է արժանի ԱՄՆ-ում այս ցեղի երկարատև ու նպատակասլաց սելեկցիայի արդյունքում ստեղծված կաթնատու տիպը, որը բնութագրվում է բարձր մթերատվությամբ՝ զիջելով միայն հոլշտինյան ցեղին: Կերակրման ցածր մակարդակի պայմաններում կենդանու մթերատվությունը կազմում է 2500-3500 կգ՝ 3.7-3.8% յուղայնությամբ, իսկ լիարժեք կերակրման և նպատակաուղղված սելեկցիոն տոհմային աշխատանքի պայմաններում՝ 4000-4500 կգ: Այն լայնորեն օգտագործվում է միջցեղային տրամախաչման ժամանակ:

Իսկ որպես ելակետային ցեղ՝ ակտիվ մասնակցություն է ունեցել

գորշ տիպի մի շարք ցեղերի ստեղծման ժամանակ:

Հաշվի առնելով, որ տեղական կովկասյան գորշ ցեղի հետագա կատարելագործումը ևս հիմնականում պետք է կատարվի շվից ցեղի օգտագործումով, և այն ռեալ հնարավորությունը, որ ԼՂ Հանրապետության գյուղնախարարության կողմից 2008 թ. ներկրվել են մաքրացող ավստրիական շվից ցեղի 66 գլուխ երինջներ, 2008 թ., կատարվել են գիտական ուսումնասիրություններ՝ ուղղված շվից ցեղի երինջների աճին, զարգացմանն ու կաթնային մթերատվության ձևավորմանը՝ 1-ին և 2-րդ լակտացիաներում, ինչպես նաև՝ տեղում ստացված մատղաշների աճին ու զարգացմանը:

**Նյութը եւ մեթոդը**

Այս առումով, ԼՂՀ Ասկերանի շրջանի «Տոհմային կայան» ՓԲԸ-ում, համանմանության սկզբունքով, ընտրվել են 20 գլուխ երինջներ և, 5-6 ամիս առաջ, նախքան ծինը ամրացվել առանձին կթվորի:

Կենդանիների կերակրումն ու խնամքը կազմակերպվել է՝ համաձայն տոհմակայանում ընդունված աշխատակարգի: Ստուգիչ կիթերի միջոցով կատարվել է կաթի հաշվարկ ամիսը 3 անգամ, կաթի յուղայնության որոշում՝ յուրաքանչ-

Աղյուսակ 1

Կովերի կաթնային մթերատվությունը և կաթի որակը

Հասակը՝ ծիներով	Կովերի թիվը (գլուխ)	Լակտացիայի տևողությունը (օր)	Ստացված կաթի քանակը (կգ)	Կաթի միջին յուղայնությունը (%)	Կաթնայնության քանակը (կգ)	Շվից ցեղի ստանդարտը, կգ,% (առաջին դասի հաշվով)	
I	16	304	3269	3.56	116.4	2400	3.7
II	16	299	3423	4.41	150.9	2900	
II-ը (%)՝ I-ի համեմատ	-	98.3	104.7	123.8	129.6	-	-

Աղյուսակ 2

Մարմնակազմության ինդեքսները

Ինդեքսները(%)	Կովերի հասակը	
	I	II
Երկարատուության	48.1	47.2
Երկարածգության	111.6	112
Կոնքակրծքային	84.4	85.1
Կրծքային	61.9	62.8
Լեցունության	117.4	119.9
Գերաճի	103.5	102.7
Ոսկրայնության	14.8	15.1

յուր ամսվա կեսին (անհատականորեն):

Ուսումնասիրվել է վերարտադրողական ընդունակությունը, առաջին բեղմնավորման և ծնի հասակը:

Կենդանիների էքստերերի գնահատման նկատմամբ պատկերացում կազմելու նպատակով կատարվել են չափումներ, որոնց հիման վրա առաջին և երկրորդ ծնի կովերի մոտ արտածվել են մարմնակազմության համապատասխան ինդեքսները՝ 12 գլխի հաշվով, իսկ առաջնածին կովերի մոտ կատարվել է բոնիտավորում:

Ուսումնասիրվել է տեղում ստացված սերնդի աճի և զարգացման դինամիկան՝ 6, 12, 18, 24 ամսական հասակում, և արդյունքները համեմատվել շվից ցեղի ստանդարտի առաջին դասի պահանջների հետ:

**Հ ե տ ա զ ո տ ո յ յ ա ն արդյունքները**

2009թ. դեկտեմբեր-մարտ ամիսներին կայացել է կենդանիների

րի ծինը: Գիտատնտեսական փորձի ընթացքում ընդգրկված 4 գլուխ կովերը, տարբեր պատճառներով, շարքից դուրս են եկել: Մնացած 16 գլխի նկատմամբ կատարվել են ուսումնասիրություններ՝ կաթնային մթերատվության և կաթի որակի ուղղությամբ առաջին և երկրորդ լակտացիաների կտրվածքով: Արդյունքները գետեղված են թիվ 1 աղյուսակում:

Ինչպես երևում է թիվ 1 աղյուսակից, փորձի տակ ընդգրկված կենդանիները, առաջին և երկրորդ լակտացիայի արդյունքներով, ցուցաբերել են բավարար կաթնատվություն: Առաջին լակտացիայում այն կազմել է 3269 կգ, երկրորդում՝ 3423 կգ կամ երկրորդ ծնի կովերը գերազանցել են առաջինին՝ 4.7 %-ով: Եթե նշված ցուցանիշները համեմատելու լինենք շվից ցեղի ստանդարտի 1-ին դասի պահանջների հետ, ապա առաջին ծնի կովերը գերազանցել են ստանդարտին. ըստ կաթնատվության՝ 36,2 %-ով՝ զիջելով յուղայնությամբ 3,8 %-ով: Իսկ երկրորդ ծնի կովերը գե-

րազանցել են ինչպես կաթնատվությամբ, այնպես էլ յուղայնությամբ՝ համապատասխանաբար՝ 18 և 19 %-ով:

Անշուշտ, կերակրման և խնամքի ավելի բարենպաստ պայմանների առկայության դեպքում, ակնկալվում են մթերատվության ավելի բարձր ցուցանիշներ: Հատկանշական է կաթի յուղայնության բարձր ցուցանիշները երկրորդ ծնի կովերի մոտ, որը կազմել է շուրջ 4.4%: Ամենայն հավանականությամբ, դրան նպաստել է կերաբաժնի ստրուկտուրայի փոփոխությունը երկրորդ լակտացիայի ժամանակ, որում մեծ տեսակարար կշիռ են կազմել կոպիտ և հյութալի կերերը՝ կազմելով սննդարարության շուրջ 59 %: Վերջինը տեղիք է տվել թաղանթանյութի խմորմանն ու օրգանական թթուների, առավել ևս՝ քացախաթթվի սինթեզմանը, որը և նպաստել է կաթի յուղայնության բարձրացմանը:

Ավստրիական շվից ցեղի երիհնջները նաև բնութագրվել են բավարար վերարտադրական հատկանիշներով: Առաջին բեղմնավորման հասակը նրանց մոտ կազմել է 19,8 ամիս, իսկ ծնի հասակը՝ 29,5 ամիս:

Առաջին լակտացիայի արդյունքներով կատարվել է կոմպլեքսային գնահատում՝ բոնիտավորում, որում ընդգրկվել են 46 գլուխ կովեր: Արդյունքում՝ 14 գլուխ դասվել են էլիտա դասին, 16-ը՝ առաջին, իսկ երկուսը՝ ապադաս, այսինքն՝ ենթարկվել են խտանման: Կովերի բոնիտավորման ժամանակ առանձնակի ուշադրություն է դարձվել կաթնագեղձի ձևին և պտուկների զարգացվածությանը: Հիմնականում կաթնագեղձի քառորդները զարգացած են հավասար

Աղյուսակ 3

Շվից ցեղի ստանդարտը(առաջին դասի հաշվով)

Սերը	Կենդանի գանգվածը ըստ հասակային շրջանների (ամիս) կգ		
	12	18	24
էգեր	240	320	390
Ցուլիկներ	300	410	500

Աղյուսակ 4

Տեղում ծնված շվից ցեղի մատղաշների աճի դինամիկան՝ ըստ հասակային շրջանների

Սեռը	Կենդանիների թիվը	Կենդանի զանգվածը՝ ծնված ժամանակ (կգ)	Կենդանի զանգվածը (ամիս. կգ)			
			6 ամսական հասակ	12	18	24
էգեր	13	27	123	197	287	389
Ցուլիկներ	13	36	144	234	351	480

րաչափ, առանձին կենդանիների մոտ ավելի լավ են զարգացած հետին քառորդները, պտուկները՝ գլանաձև և կոնաձև:

Էքստերերի գնահատման առումով, առաջին և երկրորդ ծնի 12-ական գլուխ կովերի մոտ կատարվել են մարմնամասերի 9-ական չափումներ, մասնավորապես՝ մնդավի բարձրությունը, սրբանի բարձրությունը, իրանի թեք երկարությունը, նախադաստակի փաթը, կրծքի փաթը, կրծքի լայնությունը, կրծքի խորությունը, զստոսկրերի լայնությունը, որոնց արդյունքներով արտածվել են մարմնակազմության համապատասխան ինդեքսները (աղ. 2):

Ինչպես երևում է թիվ 2 աղյուսակի տվյալներից, բացառությամբ երկարածությունների և գերաճի ինդեքսների, մարմնակազմի որոշակի առավելություն, մյուս ինդեքսների հաշվով, նկատվել է երկրորդ ծնի կովերի մոտ:

Որոշակի գիտական և պրակտիկ հետաքրքրություն է ներկայացնում այն, թե ինչպես է ընթանում տեղում ստացված մատղաշի աճն ու զարգացումը: Այս առումով, մատղաշների աճի և զարգացման դինամիկայի ուսումնասիրումը հիմնականում կատարվել է շվից ցեղի առաջին ծնից ստացված սերնդի մոտ՝ ընդգրկելով ինչպես էգերին, այնպես էլ արուներին՝ ծնից մինչև 24

ամսական հասակը: Նախատեսվել է հորթերի կերակրումը և խնամքը կազմակերպել այն հաշվով, որպեսզի այն նպաստի նրանց մոտ բարձր մթերատվության և ամուր մարմնակազմության ձևավորմանը՝ միաժամանակ լինելով տնտեսապես ձեռնտու: Ընդ որում՝ մատղաշների ընտրությունը նախատեսվել է կատարել 3 էտապներով՝ ծնված ժամանակ, 12 ամսական հասակում, 18-20 ամսական հասակում, նախքան զուգավորումը:

Ըստ աճի պլանի՝ նախատեսվել է 18-20 ամսական հասակում նրանց կենդանի զանգվածը հասցնել հասուն կովի կենդանի զանգվածի 70-75 %-ին, որն էլ պետք է համապատասխանի տվյալ ցեղի առաջին դասի ստանդարտի պահանջներին:

Կատարված գիտահետազոտական ուսումնասիրությունների արդյունքում՝ մատղաշի աճի և զարգացման ինտենսիվությունը, սահմանված մակարդակով՝ ըստ սեռի և հասակային շրջանների ապահովելը, հնարավոր չի եղել, և ստացված ցուցանիշները որոշ չափով զիջել են շվից ցեղի ստանդարտի պահանջներին: Վերջինը պայմանավորված է եղել տնտեսությունում առկա կերակրման և խնամքի ոչ բարվոք պայմաններով, որը բացասաբար է անդրադարձել հատկապես էգերի վերարտադրա-

կան հատկանիշների ձևավորմանը: Հետագայում կերակրման և խնամքի նորմալ պայմաններում բաց թողած թերաճը կոմպենսացվել է ավելի ուշ հասակում:

Գիտական հետազոտությունները կատարվել են շվից ցեղի 2008-2009 թթ. ծնված 13-ական գլուխ էգ և արու հորթերի նկատմամբ, իսկ արդյունքները համեմատվել ցեղի ստանդարտի հետ (աղ. 3 և 4):

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 4-ի տվյալները, հաշվառված էգ հորթերի միջին կենդանի զանգվածը ծնված ժամանակ կազմել է 27 կգ, 6 ամսականում՝ 123 կգ, 12-ում՝ 197, 18-ում՝ 287 և 24-ում՝ 389 կգ:

Հիմնականում էգ հորթերը, կենդանի զանգվածի չափի առումով, համապատասխանում են նշված հասակում տվյալ ցեղի 1-ին դասի պահանջներին: Միջին օրական քաշաճն առանձին հասակային շրջաններում տարբեր է. 0-6 ամսականում կազմել է 533 գ, 6-12-ում՝ 411, 12-18-ում՝ 650, 18-24-ում՝ 716 գ: Այսինքն՝ ամենացածր աճի ինտենսիվությունը էգերի և արուների մոտ նկատվել է 6-12 ամսական հասակում, երբ կերաբաժնից հանվել են կաթնային կերերը, իսկ աղեստամոքսային տրակտը դեռևս զարգացած չի եղել ընդունելու և մարսելու մեծ քանակի ծավալային կերեր՝ հյութալի և կոպիտ:

Տեղում ծնված և արտադրության ոլորտին հանձնված էգ մատղաշների սերմնավորումը կատարվել է 23,5 ամսական հասակում, երբ նրանց կենդանի զանգվածը կազմել է 374 կգ՝ զիջելով ցեղի ստանդարտին՝ 3 %-ով:

Անշուշտ, քաշաճի ճիշտ պլա-

նավորման, կերակրման ու խնամքի նորմալ պայմանների առկայության դեպքում, առաջին բեղմնավորման հասակը կարելի է հասցնել 18-20 ամսի, երբ նրանց կենդանի զանգվածը կհասնի տվյալ ցեղի հասուն կովի կենդանի զանգվածի 70-75 %-ին: Այսինքն՝ նշված հասակում կենդանիները կհասնեն ֆիզիոլոգիական և տնտեսական հասունացման և ընդունակ կլինեն ոչ միայն բեղմնավորվելու, այլև կենսունակ և բարձր մթերատվությամբ օժտված սերունդ տալու:

**Եզրակացություն**

1. Մթերատվության մակար-

դակով ավստրիական շվից ցեղի մաքրացել կենդանիները, առաջին և երկրորդ լակտացիաների արդյունքներով, դրսևորել են բարձր մթերատվություն: Առաջին լակտացիայում այն կազմել է 3269 կգ, երկրորդում՝ 3423 կգ կամ գերազանցել են ցեղի ստանդարտին՝ համապատասխանաբար՝ 36 և 18 %-ով:

2. Հաշվի առնելով, որ 1-ին և 2-րդ ծնի կովերի մոտ դեռևս աճը և զարգացումը շարունակվում են, առաջիկայում կուսումնասիրվեն մթերատվության ցուցանիշները՝ 3-րդ, 4-րդ լակտացիաներում, որը հնարավորություն կընձեռնի ավելի հստակ պատկերացում կազմելու շվից ցեղի մթերատվության պոտեն-

ցիալ հնարավորությունների մասին: Անշուշտ, կերակրման և խնամքի բարենպաստ պայմաններում նրանք կդրսևորեն մթերատվության ավելի բարձր ցուցանիշներ:

3. Մատղաշների քաշաճի ճիշտ պլանավորման և կերակրման ու խնամքի նորմալ պայմանների առկայության դեպքում ռեալ հնարավորություններ կստեղծվեն առաջին բեղմնավորման հասակը հասցնել 18-20 ամսի և ստանալ ծին՝ 27-29 ամսականում: Այդ մասին են վկայում ներկրված շվից ցեղի երինջների վերարտադրական ցուցանիշները. առաջին բեղմնավորման հասակը կազմել է՝ 20.7 ամիս, իսկ ծնի հասակը՝ 30 ամիս:

РОСТ, РАЗВИТИЕ И ФОРМИРОВАНИЕ МОЛОЧНОЙ ПРОДУКТИВНОСТИ У НЕТЕЛЕЙ ШВИЦКОЙ ПОРОДЫ АВСТРИЙСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ В УСЛОВИЯХ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ

С. Шахназарян

Национальный аграрный университет Армении, Степанакерский филиал

Г. Каспарян, Н. Мусаелян

ЗАО Племенная станция, НКР

**Ключевые слова:** швицкая порода, лактация, генетический потенциал, нетель, продуктивность

**Краткое содержание**

Проводились исследования по изучению роста, развития, формирования молочной продуктивности и воспроизводительной способности у нетелей швицкой породы австрийского происхождения, а также по росту и развитию их потомства от рождения до 24-х месячного возраста.

По результатам исследований установлено, что чистопородные животные за первую и вторую лактацию проявили высокую молочную продуктивность, которая по первой лактации составила 3269 кг, по второй – 3423 кг или превзошла стандарт породы, соответственно, на 36 и 18 процентов.

При правильном планировании привеса и наличии нормальных условий кормления и содержания возникнет реальная возможность довести возраст первой оплодотворенной самки до 18-20 месяцев и получить первый отел в возрасте 27-29 месяцев.

GROWTH, DEVELOPMENT AND FORMATION OF MILK PRODUCTIVITY IN HEIFERS OF SCHWYZ BREED OF AUSTRIAN ORIGIN IN CONDITIONS OF THE NAGORNO-KARABAKH REPUBLIC

S. Shakhnazaryan

Armenian National Agrarian University, Stepanakert Branch

G. Kasparyan, N. Musaelyan

"Breeding Station" CJSC, NKR

**Key words:** Schwyz breed, lactation, genetic potential, heifer, productivity

**Summary**

A study on the growth, development, formation of milk productivity and reproductive capacity of heifers of Schwyz

breed of Austrian origin, as well as the growth and development of their off spring from birth to 24 months of age was conducted.

According to the research it was established that pure-bred animals for the first and second lactation showed high productivity, which in the first lactation has made up 3269 kg, the second - 3423 kg or exceeded the breed standard, respectively, by 36 and 18 percent.

It is possible to age at first fertilized twings to bring up 18-20 months planning for real growth and improved feeding of young animals and get a first calving at the age of 27-29 months.

**Գրականության ցանկ**

1. Всяких А.С. - Генетическая характеристика бурьих пород и пути их совершенствования. Генетика и новые методы селекции молочных пород скота. М., "Колос", 1978.
2. Солдатов А.П., Реман В.А. - Основы теории и практики отбора первотелок швицкой породы по пригодности к машинной дойке. Труды ВАСХНИЛ, М., 1981.
3. Յու.Գ. Մարմարյան և ուրիշներ- Անասնաբուծության հիմունքներ. Երևան, 2001թ.:

Ընդունված է տպագրության  
25.10.2012թ.

ՀՏԴ 619.616.9

**ԳԱԼԱՐՄԻՆԸ ՈՐՊԵՍ ԹԻՐՈՉԻՆ ԿԻՆԱՉԱ ՖԵՐՄԵՆՏԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԽԹԱՆԻՉ**

Մ.Ա. Սարգսյան, Ս.Լ. Գրիգորյան  
Հայաստանի ազգային ագրարային համալսարան  
Ա.Ա. Գալոյան

Հ. Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ ՀՀ ԳԱԱ

Բանալի բառեր - *թիրոզին կինազա, գալարմին, ծովախոզուկ, Clostridium perfringens, մանրէական աճեցվածք*

**Ն եր ա ծ ու թ յ ու ն**

Ինգիբիտորի միջոցով կատալիտիկ ռեակցիաների կասեցումը պայմանավորված է նրանով, որ վերջինը շրջափակում է կատալիզատորի ակտիվ կենտրոնները կամ ակտիվ մասնիկներով հակադրում թույլ ակտիվությամբ ռադիկալների առաջացմանը:

Մեր նախնական հետազոտու-

թյունների արդյունքներով պարզվել է, որ կենդանիների օրգանիզմում, թիրոզին կինազայի համակցությամբ Գալարմինը նպաստում է կենդանիների հակահիֆեկցիոն ակտիվության բարձրացմանը: Այդ երևույթը բացահայտելու նպատակով, փորձարարական աշխատանքները կատարվել են անասնաբուժական և անասնաբուժա-

սանիտարական փորձաքննության պրոբլեմային լաբորատորիայում:

**Նյութը եւ մեթոդը**

Թիրոզին կինազա ինգիբիտորի հակամանրէական ազդեցությունը ուսումնասիրելու նպատակով, հետազոտությունները կատարվել են 350 – 400 գրամ կենդանի